

ՊՐՈՖ. Ն. Ա. ՏՐՈՒՑԿԻ

Կ Ո Ր Ն Գ Ա Ն

633
S-99

18 973

04 AUG 2010

633

ՊՐՈՑ. Ն. Ա. ՏՐՈՒՑԿԻ

5-99

այ

ԿՈՐՆԳԱՆ

1808 3
36095



1935

ՅԵՐԵՎԱՆ

24 AUG 2013

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Համ. Կ. (բ) Կուսակցութեան XVII համագումարում ընկ. Ստալինը բացառիկ խորութեամբ տվեց անասնապահութեան հետամնացութեան պատճառների ջննադատականը և նշեց նրա վերելքի ուղիները: Ընկ. Ստալինի այդ ցուցումների շնորհիվ, 1934 թվին բեկում մտցվեց հանրապետութեան վողջ անասնապահական տնտեսութեան մեջ: Այժմ մեր խնդիրն է ամբողջովն անասնապահութեան հետագա ել ավելի նշանակալից վորակական ու քանակական վերելքը:

Անասնապահութեան վերելքն ապահովող միջոցառումների շարքում ամենաառաջնակարգ տեղերից մեկն է գրավում կերի բազայի ընդարձակման խնդիրը, մասնավորապես կոլտնտեսութեանների ու խորհրդայն տնտեսութեանների դաշտավարութեան մեջ բազմամյա լոբազգի կերաբույսեր (կորըն-

զան, ապուշտ և այլն) մտցնելու խնդիրը: Հայաստանի նման լեռնային մի յերկրի համար ցանքադաշտերում բազմամյա լուբազգի կերաբույսեր մտցնելը և խոտաբույսերի ցանքաշրջանառութիւն կերառելը, բացի այն, վոր ավելացնում և խորհտնտեսութիւնների ու կոլտնտեսութիւնների կերի սեսուրսները, դրա հետ միասին լուծում են անհող բերրութեան վերականգրման և շարունակաբար բարձր բերք ստանալու խնդիրը:

Հայտնի յի, վոր բազմամյա լուբազգի խոտաբույսերը հողը հարստացնում են ազոտով և բարելավում են նրա կառուցվածքը: Միևնույն դաշտում այդ խոտաբույսերի 2 — 3 տարվա ցանքի շնորհիվ մոլախոտերն արմատապես վոչնչանում են, և ապահովվում և նրանց հաջորդող կուլտուրայի բարձր, տընտեսապես և ֆիզիկալոր բերքը:

Սակայն խիստ կտրված լեռնային սելեֆ ունեցող մի յերկրի համար առանձնապես կարևոր է այն, վոր բազմամյա խոտաբույսերը հողապահպանութեան իրենց

ընդունակութեամբ յետ չեն մնում անտառային բուսականութիւնից:

Բազմամյա խոտաբուսականութիւնը չի ք լեռնալանջերի հողաշերտը լվացվելուց և մերկացվելուց պաշտպանելու ամենաձեռնառու և արդյունավետ միջոցներից մեկն է:

«Կուբայի սպանական պլանտատորները հրդեհում էյին լեռնալանջերի անտառները և այդ հրդեհից առաջացած մոխրից ստանում պարարտանյութ, վորը բավականացնում էր խիստ յեկամտարեր սուբճի թըփերի միայն մեկ սերնդին. նրանց ի՞նչ գործն էր, թե այնուհետև տրոպիկական հեղեղները սրբում էյին հողի վերին անպաշտպան շերտը՝ իրենց յետևը թողնելով մերկացած ժայռեր»^{*)}.)

Յր. Ենգելսը կես դար առաջ այսպես և բնորոշել կապիտալիստական գիշատիչ հողագործութիւնը: Մարգա-արոտային հողերի վարելուն, վոր տեղի ունի մեր վորոշ գյուղերում ու կոլտնտեսութիւններում,

*) Փր. Էնգոլե. — Дialectика природы, изд. 6-ое, стр. 57.

պետք է վերջ տալ, վորովհետև այդ ավելի
 յե մեծացնում անտեսական ոգտագործու-
 մից դուրս յեկող հողային տարածություն-
 ներք, վորոնք կապիտալիստական անտեսու-
 սավարական հողոգտագործման հետեանքով
 վեր են ածվել մերկ ժայռերի: Մեր հան-
 րապետության վորոշ լեռնային շրջաննե-
 րում քիչ չեն այդպիսի տարածություննե-
 րը: Այդ վարված մարգա-արոտային տա-
 րածություններն անհրաժեշտ է վերականգ-
 նել և պիտանի դարձնել ոգտագործման
 համար՝ բազմամյա խոտացանության մի-
 ջոցով:

Լեռնային շրջանների մարգա-արոտնե-
 րը և վարելահողերը հանդիսանում են սո-
 ցիալիստական անասնապահության կարե-
 վորագույն հիմքը:

Սոցիալիստական հողագործության ճիշտ
 դրվածքով մենք պետք է կանխենք և թույլ
 չտանք սոցիալիստական արոտների և դաշ-
 տերի բերրիության անկում և ել ավելի ըն-
 դարձակենք սոցիալիստական անասնապա-
 հության կերի բնուրանները:

Պրոֆ. Տրոիցկու սույն գրքույկն այս
 կարևորագույն աշխատանքներում կարող է
 մեծ ոգնություն ցույց տալ սոցիալիստա-
 կան անասնապահության ֆրոնտում աշ-
 խատողներին:

Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Կ Ո Ր Ն Գ Ա Ն

Կորնզանը բազմամյա խոտ է, վոր վա-
ղուց արդեն, վորպես կուլտուրա, հայտնի
յե շատ յերկրներում: Առաջին անգամ կորըն-
զան մշակել սկսեցին սրանից 400 տարի
առաջ Ֆրանսիայում, վորտեղից նա արագ
տարածվեց ամբողջ Յեվրոպայում: Ներկա-
յումս կորնզանի կուլտուրան մեծ չափով
տարածված է ամբողջ Յեվրոպայում և Հյու-
սիսային Ամերիկայում: ԽՍՀՄ-ում կորըն-
զանը տարածված է գլխավորապես հարա-
վային շրջաններում: Անդրկովկասում, մաս-
նավորապես Հայաստանում, կորնզանի կուլ-
տուրան տեղ-տեղ բավականին ուժեղ է
տարածված: Մինչև իմպերիալիստական պա-
տերազմը, 1910—11 թ. թ., ներկայիս Կո-
տայքի, Ախտայի ու Նոր-Բայազետի շր-
ջանների սահմաններում կորնզան շատ է
ցանվել: Պատերազմի և դաշնակիների տի-
բապետության ժամանակ կորնզանի կուլ-

տուրան Հայաստանում համարյա բոլորովին անհետացավ և միայն Խորհրդային Իշխանութան ժամանակ նա նորից սկսեց տարածվել: 1926 թ. արդեն Հայաստանում կատարված գյուղատնտեսութան հետազոտությունը շատ շրջաններում հայտարերեց կորնզանի ցանքեր, և այն ժամանակվանից մինչև այժմ կորնզանի ցանքի տարածություններն ավելի ու ավելի յեն լայնանում մեր խորհանտեսություններում և կոլտնտեսություններում: Հայաստանում մշակվող կերախոտերի մեջ կորնզանն իր տարածությունումը առվույտից հետո յերկրորդ տեղն է բռնում:

Պետք է նշել, վոր Սևանի շրջակա գյուղերում հայտարերվել են կորնզանի շատ հին ցանքեր, վորոնք վաղուց ի վեր, մոտ 70 տարի, գուցե և մոտ 100 տարի յի, վոր ցանվում են իրենց սերմերով: Կասկած չկա, վոր այդ տեղական հին տեսակները պետք է մեծ արժեք ունենան և նրանց վրա հարկավոր է ուշադրություն դարձնել խորհանտեսությունների և կոլտնտեսությունների

ների կորնզանի ցանքը լայնացնելու համար:

ԲՈՒՅՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կորնզանը բաղմամյա խոտաբույս և, վորի առանձին թփերը կարող են յերկար ապրել (12 տարի և ավելի): Նրա արմատն ուղիղ ու յերկար է և կարող է շատ խոր, մի քանի մետր թափանցել հողի մեջ: Յեթն հողի տակ համատարած ժայռ և, կորնզանի արմատները փալում են նրա մակերեսին և ճյուղավորվելով անցնում են ժայռի ճեղքերով: Հողի մակերեսի մոտ արմատի հենց բնից դուրս են գալիս բաղմամբիվ տերևներ և ցողուններ: Կորնզանի մի քանի տեսակների ցողունները բարձրանում են բոլորովին ուղղաձիգ, մյուսները՝ թեք: Ցողունները բավականին պինդ ու հաստ են և 70—100 սմ բարձրություն ունեն: Բացի արմատային տերևներից, ցողունների վրա ևս տերևներ կան: Ցողունների վրա վորքան շատ տերևներ լինի, այնքան կորնզանի տվյալ տեսակն ավելի յի պլտանի, վորովհետև ավելի շատ խոտ կտա: Ցողունների գագաթին դասավորված են կորնզանի վարդա-

գույն ծաղիկները՝ հավաքված յերկարա-
վուն հասկի ձեով: Պտուղներն ամուր են,
փայտացած թաղանթով, կարճ փշերից
կազմված սանրիկով: Յուրաքանչյուր պտղի
մեջ գտնվում է բավականին խոշոր մի
սերմ:

ԿԵՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՅՈՒՆԸ

Կորնզանը գերազանցապես խոտհարքա-
յին բույս է և ամենուրեք մշակվում է
առավելապես իբրև հնձելու խոտ, շատ քիչ
գեպքերում իբրև արոտային կեր: Կորն-
զանը մեծ մասամբ տալիս է մեկ հունձ.
Կան նաև յերկու հունձ տվող տեսակներ,
բայց գեպքեր են յեղել, յերբ նույնիսկ
ստացվել է կորնզանի յերեք հունձ: Հայաս-
տանում կորնզանը մեծ մասամբ տալիս է
մեկ հունձ, բայց այստեղ ել յեղել են յեր-
կու հնձի գեպքեր: Կասկած չկա, վոր լավ
տեսակներ ընտրելով, լավ մշակելու և լավ
խնամքի գեպքում, Հայաստանի շատ վայ-
րերում, բացի ամենաբարձր լեռնային վայ-
րերից, կարելի կլինի ստանալ կորնզանի
յերկու հունձ: Յեթե կորնզանն իր ժամա-
նակին հնձվի, խոտը փափուկ և սննդարար

կլինի: Վորպես արոտային կեր ևս կորն-
զանը լավ է: Նա արժեքավոր է նրանով,
վոր անասունները կարելի յե արածեցնել
մաքուր կորնզանի մեջ, և գրանից անա-
սունները փորուսուցք չեն ստանա, մի բան,
վորից պետք է զգուշանալ՝ անասուններն
առվույտի և յերեքնուկի դաշտում արածեց-
նելիս: Սակայն պետք է հիշել, վոր կորն-
զանն արածեցնելուն այնքան ել չի դիմա-
նում, ուստի շատ արածեցնելը նրան կո-
րըստի յե մատնում:

Կորնզանն առանձնապես արագ է վոչըն-
չանում, յերբ նրա դաշտում վոչխարներ են
արածեցնում: Ուստի լավ է արոտի վե-
րածել կորնզանի հին դաշտերը, վորտեղ
կորնզանն արդեն սկսում է դուրս քշվել
այլ խոտարույսերի կողմից:

ԿՈՐՆԳԱՆԻ ՊԱՀԱՆՋԸ ԿԼԻՄԱՅԻ ՅԵՎ ՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Կորնզանն ամենայերաշտադիմացկուն կե-
րախոտերից մեկն է: Առանց արհեստական
վոռոգման նա կարող է բուսնել այնպիսի
վայրերում, վորտեղ առվույտն առանց

Ջրելու հնարավոր չե մշակել: Միայն կորըն-
գանի յերիտասարդ բույսերն են, վոր
ավելի պահանջկոտ են խոնավության նկատ-
մամբ: Կորնգանը ցրտին դիմանում է և
ձմրան ցրտից չի վախենում նույնիսկ ձյուն
քիչ լինելու դեպքում: Միայն սկզբնական
ըրջանում յերիտասարդ կորնգանն ավելի
զգայուն է ցրտի նկատմամբ: Դրա համար
եղ, յեթե ձմեռը սակավածյուն է լինում,
աշնանից կորնգան ցանելը վտանգավոր է:
Կորնգանը հողի նկատմամբ շատ քիչ է
պահանջկոտ նա կարող է մշակվել այն-
պիսի աղքատ և խճոտ հողերում, վորտեղ
այլ կերտիտները վատ են աճում: Կորնգանը
լավ աճում է շատ կիր պարունակող հողե-
րում: Աղքատ, կրային հողերը, վորոնք
կրի առատության պատճառով ուրիշ կուլ-
տուրաների համար պիտանի չեն, կորնգանի
համար պիտանի յեն: Կորնգանի մեծ բերք
ստանալու համար հարկավոր են միայն փրկ-
րուն, ջուր ներս ծծող հողեր, վորպեսպի
բույսը կարողանա իր արմատներն ավելի
խոր տանել: Հողի մեջ ավելորդ ջուր
կորնգանը չի սիրում, ուստի նա վատ է

աճում ցածրադիր վայրերում և հովիտնե-
րում, իսկ լեռների լանջերում և բարձունք-
ներում լավ է աճում: Արհեստական վո-
ռոգումն զգալի չափով բարձրացնում է
կորնգանի բերքը: Այն տեղերում, ուր
կորնգանն առանց վոռոգելու տալիս է մեկ
հունձ, ջրելու դեպքում կարելի յե ստանալ
յերկու հունձ, յեթե միայն ամառը բա-
վականին յերկարում է: Կորնգանն աղոտ
հողեր չի սիրում: Կորնգանի բերքը խիստ
պակասում է, յերբ ցանվում է ամբացած
հողում, և յերբ յենթահողն այնքան պինդ
է լինում, վոր ջուրը հողի մեջ մտնել չի
կարողանում: Ընդհանրապես Հայաստանում
կորնգանը կարող է մշակվել համարյա
ամեն տեղ—թե միջին լեռնային և թե բարձր
լեռնային գոտում: Ցածրադիր ըրջաններում՝
Յերևանյան հարթավայրում կորնգանի
կուլտուրան տարածվել չի կարող: Ուժեղ
շոգը դժվարացնում է նրա մշակութունն
առանց վոռոգելու, իսկ շոգ կլիմայում, յեթե
կորնգանը ջրվում է, կարող է խիստ
կերպով վնասվել պարագիտային սնկերից:
Միջին լեռնային գոտում, լեռների լանջե-
րում և բլուրներում, սարահարթերում մշա-

կելու համար կորնգանն ամենահարմար կերախոտն է: Կորնգանը ցանկուց հետո կարող է մնալ յերկար տարիներ: Կան կորընգանի ցանքեր, վորոնք 12 տարի լավ դիմացել են: Համեայն դեպս 5—6 տարի կորնգանը հեշտությամբ կարող է մնալ, յեթե ցանքաշրջանառության մեջ չի:

Առաջին տարին կորնգանը թույլ է գարգանում, և սովորաբար կարելի չէ ամրան վերջին մեկ փոքր հունձ վերցնել: Բայց կան կորնգանի տեսակներ և նույնիսկ տեղական տեսակներ, վորոնք լավ դարգանում և ծաղկում են նույնիսկ առաջին տարին, տալով լավ, բերքաշատ հունձ: Կորընգանի սերմերի յարավիկացիան արագացնում է նրա դարգացումը:

Քանի վոր կորնգանը յերկարամյա կուլտուրա չէ, ապա այլ կուլտուրաների շարքում կարող է դանազան տեղեր գրավել: Բազմամյա կերաբույսերի ցանքաշրջանառություններում կորնգանը կարող է գրավել նույն տեղերը, ինչ վոր առվույտը և յերեքնուկը առավելապես շարքահերկ կուլտուրաներից հետո, վորպես գարնան յեն-

թացանք, վորպեսզի հողը նախորոք հիմնավորապես ազատվի մոլախոտերի սերմերից: Իսկ յեթե ցանկալի չէ կորնգանն ավելի յերկար ժամանակ ոգտագործել, ապա գերադասելի չէ այն ցանել ցանքաշրջանառությունից դուրս: Այն դեպքում, յերբ ցանկալի չէ մարգագետին դարձնել բարձր-լեռնային և միջին լեռնային գոտում այն թեք լանջերը, կամ աղքատ, խրճուտ հողերը, վորոնք առաջ վորևէ կուլտուրայի տակ են յեղել—այդ դեպքում կորընգանն այդ նպատակի համար ամենահարմար մշակույթն է հանդիսանում: Այդպիսի դեպքում անհրաժեշտ է սովորականից մի քիչ ավելի խիտ կորնգանի ցանք կատարել, և նա մի քանի տարի շարունակ կտահնձելու լավ խոտակազմ, վորից հետո այդ հողամասը բնական ճանապարհով բավականին արագ կդառնա մարգագետին: Կորնգանն այդպիսի մարգագետնում յերկար պահպանվում է: Ամենից լավ և ամենից արագ այդպիսի մարգագետնացումը լինում է կարտոֆիլի տեղում: հացահատիկային դաշտերից հետո մարգագետնացնելու համար անհրաժեշտ է յամենից ավելացուցիչ մշակում կատարել:

58093
8001



ԿՈՐՆԳԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Կորնդանի, ինչպես և բոլոր բազմամյա ցանովի խոտաբույսերի համար անհրաժեշտ է հողը խնամքով նախացանքային մշակության յենթարկել, վորպեսզի ապահովվի մոլախոտերի վոչնչացումը:

Կորնդանը լավ աճում է հատկապես շարքահերկ կուլտուրաներից հետո (կարտոֆիլ, ճակնդեղ և այլն): Լավ բերք ստանալու և մոլախոտերը վոչնչացնելու համար, հանձնարարվում է հողը խոր վարել աշնանից, իսկ գարնանը յերեսվարից հետո լավ փոցխել: Կորնդանը կարելի յե ցանել վաղ գարնանը, յեթե վտանգ չկա ուշ սառնամանիքներից: Կորնդանը ծլում է բավական դանդաղ: Ծածկող բույսի հետ կորնդանը սովորաբար պակաս բերք է տալիս, քան առանց նրան: Յանքը կարելի յե կատարել և՛ շաղացանով, և՛ շարքացանով. վերջինս, իհարկե, ավելի լավ է: Շաղացանի դեպքում, նայած հողին, պետք է ցանել 120-ից մինչև 140 կգ մեկ հեկտարին, իսկ շարքացանով՝ 100-ից մինչև 120 կիլոգրամ, յեննելով սերմերի անտեսահան

պիտանիությունից: Կորնդանի ծիլերն առաջին շրջանում աճում են դանդաղ և կարող են մոլախոտերով ծածկվել, ուստի պետք է քաղհանել:

Յեթե առաջին տարվա վերջին կորնդանը բավական աճել է, պետք է հնձել: Յերկրորդ տարվանից սկսած՝ լրիվ բերք է ստացվում: Հայաստանում մինչև այժմ կորնդանի բերքը մի հնձի դեպքում հեկտարից հասնում է 2-4 տոննի, իսկ յերկու հնձի դեպքում՝ 4-6 տոննի: Տեսականորի ճիշտ ընտրության և կանոնավոր մշակելու դեպքում հնարավոր է մինչև 8 տոնն բերք ստանալ:

Կորնդանը պետք է հնձել ծաղկելու սկզբին. յեթե հունձն ուշանում է, ցողունները կոշանում են, ստացվում է կոշտ խոտ և կորցնում է իր սննդարարության զգալի մասը: Յերկու հնձի դեպքում առաջին հունձը պետք է անել մինչև ծաղկելը:

Կորնդանի խոտը լավ և արագ է չորանում, բայց բերքն պոուշությամբ պետք է հավաքել, վորովհետև նրա տերեւները չոր վիճակում հեշտ են թափվում:

ԿՈՐՆԹԱՆԻ ՅԱՆՔԸ ՍԵՐՄԱՑՎԻ ՀԱՄԱՐ

Սերմ կարելի չէ հավաքել կամ կորնգանի սովորական ցանքերից, կամ սերմացվի համար ցանված հատուկ ցանքերից: Հատուկ ցանքերը, լայնաշարք ցանքի դեպքում, մեծ քանակությամբ սերմ են տալիս, միջին թվով՝ հեկտարից 5—8 ցենտներ:

Կորնգանի սերմը համահավասար չի հասունանում և յեթե ժամանակին չի հավաքվում, թափվում է: Դրա համար ել սերմը պետք է հավաքվի մեծ զգուշությամբ:

Յեթե սերմացու կորնգանի տարածությունը փոքր է, կարելի չէ սերմը հավաքել ձեռքով, վորի համար պետք է կոպիտ կտորից կարված ձեռնոցներ հագնել: Այդ դեպքում նախ հասունացած սերմը հավաքում են, վորից հետո մնացած կորնգանը հնձում են ու թողնում, վոր խրձերի մեջ սերմը հասունանա:

Յեթե սերմացու կորնգանի տարածությունը մեծ է, անհրաժեշտ է հնձելով հավաքել: Այդ դեպքում հունձը պետք է սկըսել այն ժամանակ, յերբ ծաղկեփնջի

ներքին ու միջին պտուղները հասունացել են: Հունձը պետք է անել վաղ առավոտյան, յերբ դեռ ցոլ կա նստած: Հնձած կորնգանը փոքրիկ խրձեր պիտի կապել և փոխադրել կալսելու տեղը, ուր և պետք է թողնել մինչև չորանալը: Խրձերը փոխադրելիս հարկավոր է նրա տակը բրեզենտ կամ վորեկ այլ բան փռել, վորպեսզի թափված սերմերը չկորչեն: Չորացած կորնգանը կալսվում է սովորական կարգով:

Կալսելուց հետո կորնգանի սերմացուն խնամքով չորացվում է և պարկերի մեջ պահվում չոր տեղ:

ԿՈՐՆԹԱՆԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Կորնգանը, մյուս կերախոտերի հետ համեմատած՝ ավելի քիչ է յենթարկվում վնասատուների հարձակման: Լինում են տարիներ, վոր բզեզը մեծ քանակությամբ սերմ է ուտում, և կորնգանի պտուղների մեծ մասը դատարկ է մնում: Յերբեմն կորնգանի տերևների վրա նստում է պարազիտային մի սունկ, վոր կոչվում է ալրային ցոլ. այս դեպքում կորնգանի տերևների վրա սպիտակ

փոշի յե ցանված լինում: Ալրոյին ցողը
 յերևան ե գալիս խիստ խոնավութեան դեպ-
 քում—խոնավ հողերում, իսկ ջրելու դեպքում,
 յերբ ջուրը լճանում ե, կամ յերբ ցանքը
 չափից դուրս խիտ ե: Կորնզանի վրա առա-
 ջացող ալրացողի գեմ պետք ե ձեռք առնել
 նախագգուշական միջոցներ, այն ե՝ ալելի
 նոսր ցանք կատարել, զգուշութեամբ կատա-
 րել վոռոգումը և ցանքի համար տեղի ձիշտ
 ընտրութեան կատարել:

ՎԱՅՐԻ ԿՈՐՆԳԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի լեռնային մասերում առատ
 բուսնում են վայրի կորնզանի զանազան
 տեսակներ: Նրանց կարելի յե բաժանել
 յերկու տիպի. առաջինն արտայինն ե՝ կար-
 ճահասակ, տարածվող ցողուններով, իսկ յերկ-
 րորդը՝ խոտհարքայինը—բարձր, ուղղաձիգ
 ցողուններով:

Վայրի կորնզան շատ ե աճում Լոռում,
 Աղմաղանի լեռներում, Դարալագյազի մո-
 տերքը, Սևանի շրջակայքում, Արագածի
 լանջերում: Վայրի կորնզանի խոտհարքա-
 յին տեսակները շատ արժեքավոր են, վորով-

հետև լավ հարմարվել են Հայաստանի կլի-
 մային, դիմացկուն են ու յերկարատև: Լոռ-
 վա գոնալ կայանում վայրի կորնզան մշա-
 կելու փորձերը շատ լավ արդյունք են տվել:
 Յեղել են դեպքեր, վոր կոլտնտեսականներն
 իրենց դաշտերում վայրի կորնզանի սերմեր
 են ցանել: Վայրի կորնզանի սերմ հավաքե-
 լու վրա պետք ե շատ մեծ ուշադրութեան
 դարձնել: Ներկայումս մեծ քանակութեամբ
 կուլտուրական կորնզանի սերմ ստանալ հնա-
 րավոր չե, վորովհետև, ընդհանրապես, մեզ
 մոտ՝ Միութեան մեջ նրանցից շատ քիչ կա:

Քանի վոր Հայաստանում այժքան առատ
 վայրի կորնզան կա, յեթե նրա սերմը հա-
 վաքելու գործը լավ կազմակերպվի, այդ
 կարող ե մեծ չափով ոգնել այդ հիանալի
 կերաբույսի մշակութեան ծավալմանը, վոր,
 անկասկած, Հայաստանում մեծ ապագա
 ունի:



Գառ. խմբագիր՝ Ս. Խոսեակյան
Վոճարան՝ Հ. Հարությունյան
Սրբագրիչ՝ Խ. Յվաղյան

Գլավիտի լիազոր № Գ-77

Հրատ. № 210, պատվեր № 236, տիրած 2000

Հանձնվել է արտադրության 1935 թ. ապրիլի 14-ին

Ստորագրված է ապելու. 1935 թ. մայիսի 11-ին

Գյուղճրատի տպարան, Յերևան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0295449

18573

15 400.



Проф. Н. А. ТРОИЦКИЙ

Э С П А Р Ц Е Т

Сельхозгиз

1935

Эривань